
**ՌԱԴԻՈՆ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ
(ՀՀ-ում և Սփյուռքում գործող ռադիոընկերությունների
օրինակով)**

ՀՈՎՍԵՓՅԱՆ Մ. Մ.

Վերջին երկու տասնամյակում ձևավորված և զարգացման սրնթաց շրջափուլեր ապրած համացանցը բարենպաստ պայմաններ ստեղծեց ՁԼՄ-ների հետագա զարգացման համար: Համացանցի օգտագործումը հնարավորություն տվեց ստեղծել մինչ այդ նախադեպը չունեցող՝ առցանց նոր տարբերակներ, հիմնադրել առցանց մամուլ, ռադիո և հեռուստատեսություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացումը նոր ասպարեզ բացեց ՀՀ-ում և Սփյուռքում գործող զանգվածային լրատվամիջոցների համար, լսարաններ նվաճելու և միջազգային ճանաչման հասնելու նոր ուղիներ նախանշեց: Եթե արտասահմանյան երկրներում, հատկապես ԱՄՆ-ում, անցյալ դարի 1990-ական թթ. սկզբներին հիմնվեցին տասնյակ հազարավոր մամուլի, ռադիո-, հեռուստակայքեր, ապա ՀՀ-ում այդ գործընթացը սկսվեց 1990-ական թթ. կեսերից և իր շարունակությունը գտավ հետագա տարիներին: Համացանցի զարգացմանը զուգընթաց բարելավվեց նաև դրա կապի որակը, աճեց արագությունը, ավելացավ օգտատերերի թիվը, որոնք նպաստեցին հիմնելու առցանց հեռուստատեսություն և ռադիո: Էլեկտրոնային ՁԼՄ-ների ի հայտ գալը համացանցում այդ տեղեկատվամիջոցների համար նախանշեց մրցակցության և զարգացման նոր շրջափուլ՝ էականորեն մեծացնելով հնարավոր և իրական լսարանի թիվն ու տեղեկատվություն հաղորդելու շառավիղը: Առցանց հեռուստառադիոընկերությունները կարճ ժամանակահատվածում մեծ ճանաչում և լսարան հավաքեցին: Համացանցի հնարավորությունների օգտագործումը լուրջ մարտահրավերների առջև կանգնեցրեց հեռարձակման հաճախակություններից օգտվող ռադիոկայաններին, որոնք կարճ ժամանակահատվածում կորցրեցին կայուն լսարանային խմբեր, հեռարձակման լավագույն ժամեր, ինչպես նաև ռադիոազդեցության շառավիղի մի մասը: Ժամանակակից մարտահրավերների պայմաններում ավանդական ռադիոն փորձում է որոշակի ճկունություն դրսևորել և գտնել ոչ միօրինակ մոտե-ցումներ ու լուծումներ, որպեսզի դուրս գա պարտադրված իրավի-ճակից և ներհյուսվի հայրենական և միջազգային ռադիոշուկաներին:

Միջազգային ասպարեզում առցանց ռադիոյի լավագույն օրինակ է 2000թ. ի վեր ԱՄՆ-ի Գայիֆորնիայի նահանգում գործող Pandora-ն (www.pandora.com), որը ներկայացնում է երաժշտական տարբեր ուղղությունների ճանաչված երգիչների կատարումներ, ինչպես նաև հայտնի երգերի և հիթերի ավտոմատ մատուցման համակարգը: Pandora առցանց

ռադիոն խոշորագույնն է աշխարհում և ունի ամսական մինչև 80 միլիոն ակտիվ օգտատեր-այցելու: Facebook սոցիալական ցանցում ռադիոկայանի գրանցված խմբի անդամների թիվն անցնում է երեք միլիոնից (2013թ.): Ունենալով երաժշտական համարների բազմամիլիոնանոց ռեսուրս՝ առցանց ռադիոկայանը կարողանում է հաշվված վայրկյանների ընթացքում ավտոմատ համակարգով գտնել և ունկնդրին մատուցել ցանկացած երաժշտական համար, ընդունել պատվերներ և երաժշտական համարը հեռարձակել պատվիրված ժամանակահատվածում: Pandora-ն, իր հնարավորություններից ելնելով, կարողանում է կազմել ու ունկնդրին մատուցել երաժշտական տարբեր ձևաչափեր և ժանրեր պարունակող կատարումներ, այբումներ, ամբողջական համերգներ և ծրագրեր: Ռադիոունկնդիրը Pandora ռադիոյի ծառայություններից օգտվելու համար նախօրոք գրանցվում է վեբ-կայքում՝ նշելով իր էլեկտրոնային փոստի տվյալները: Ռադիո-կայանն ունի վճարովի և անվճար բաժանորդագրություն, որից անվճարը զովագրով է, իսկ վճարովին՝ առանց զովագրի: Ինչպես նշում է gazeta.ru-ն, 2013թ. հունիսին նմանատիպ ռադիոընկերություն հիմնեց նաև Apple ընկերությունը, որի iradio առցանց ռադիոն իր տեխնիկական և ստեղծագործական հնարավորություններով գերազանցում է ԱՄՆ-ի հայտնի Pandora-ին՝ կիրառելով մի շարք նոր գործառնություններ, մասնավորապես մեղեդին կրկին լսելու և մեկ հարմարով (քլիքով) գնելու հնարավորություն:

Ժամանակակից փուլում էլեկտրոնային ՁԼՄ-ների հեռարձակման և ազդեցության հնարավորություններն այնքան են մեծացել, որ որոշ երկրների օրենսդրական ոլորտում առցանց տեղեկատվամիջոցները սկսել են գրանցվել որպես ՁԼՄ-ների նոր տեսակ (ԱՄՆ, ՌԴ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա): Հայաստանի Հանրապետությունում այդ գործընթացները համապատասխանում են մեր երկրում համացանցի զարգացմանը, կապի որակի բարձրացմանը, համացանցում ՁԼՄ-ների դերի մեծացմանը և ազդեցության շառավղի ընդլայնմանը: Համացանցի շնորհիվ Հայաստանի և Միջուրքի մի շարք ռադիոկայաններ միջազգային ասպարեզ դուրս գալու և մրցունակ ռադիոարտադրանք պատրաստելու և դրա իրացման նոր ռադիոշուկաներ որոնելու հնարավորություն են ստացել: ՀՀ-ում և Միջուրքում գործող ռադիոկայանների հայերեն հաղորդումների ձայնասփռումը դարձել է ավելի մասշտաբի և ունկնդրելի աշխարհի տարբեր երկրներում: Հայկական ռադիոկայանները, բացի հանրային ռադիոյից, միջազգային ճանաչման հասնելու համար դեռ երկար ճանապարհ պիտի անցնեն, որին մեծապես օգնում է համացանցն իր անսպառ հնարավորություններով, դրսևորումներով և ազդեցու-թյան շառավղով¹:

¹ Հովսեփյան Մ., Ռադիոշուկայի օրինաչափությունները և զարգացման միտումները ՀՀ-ում, Ե., 2002, էջ 214:

Հայաստանի Հանրապետությունում և Միջուկում գործող ռադիոկայանների ներգրավվածությունը համացանցում պայմանականորեն կարելի է բաժանել երեք հիմնական մասերի.

ա/ համացանցային կայքեր ունեցող,

բ/ համացանցում օնլայն հեռարձակում ապահովող,

գ/ առցանց ռադիոկայաններ:

Նշենք, որ սկզբնական շրջանում՝ 1990-ական թվականների վերջին, ՀՀ-ում առկա ռադիոընկերությունների զգալի մասը կարողացավ ձևավորել և շահագործել համացանցային ռադիոկայքեր, որոնց հիմնական դրմեյնը 1994թ. օգոստոսի 26-ին գրանցված am տիրույթն է: ՀՀ-ում գործող ակտիվ կայքերն ընդամենը տասնհինգ տարվա պատմություն ունեն: Այս կարճ ժամանակահատվածում դրանք իրենց շուրջ հավաքեցին բավականաչափ մեծ լսարան՝ ձեռք բերելով որոշակի ճանաչվածություն, վարկանիշ և ազդեցություն: Հայաստանյան ռադիոկայաններից համացանցում առավել գործուն ռադիոկայքեր ունեն ՀՀ հանրային ռադիոն (www.armradio.am), «Ռադիո Վանք» (www.Radiovan.am), «Երևանը» (www.arradio.am), «Ռադիո հայր» (www.Radiohay.am), «Արձագանքը» (www.ardzagank.com), «Վեմը» (www.vem.am), «Լրատվական ռադիոն» (www.impuls.am), «Ազատություն» ռադիոկայանի Հայաստանի բյուրոն (www.azatutyun.am): Ռադիոընկերությունում գործող կայքերը հիմնականում երկլեզու և եռլեզու են, ունեն մի շարք մուլտիմեդիա հնարավորություններ. աուդիո-, տեսա-, ֆոտո- բաժիններ, ինտերակտիվ հաղորդակցության և ուղիղ եթերի ծառայություններ: Լավագույն օրինակ է «Ազատություն» ռադիոկայանի հայաստանյան ծառայության՝ մուլտիմեդիա հնարավորություններով հագեցած կայքը, որը թույլ է տալիս անհապաղ արձագանքել հանրապետությունում տեղի ունեցող դեպքերին և իրադարձություններին՝ աուդիո-, տեսա-, ֆոտո- տարբերակներով և ուղիղ հեռարձակում կազմակերպել իրադարձության վայրերից:

Հայաստանի Հանրապետությունում գործող և ինքնուրույն ծրագրային քաղաքականություն վարող ռադիոընկերություններն ունեն հեռարձակման երկու ձև՝ օֆլայն (օբյեկտիվ՝ իրական) և օնլայն (վիրտուալ՝ համացանցի միջոցով): Ռադիոկայքերի ձևավորումն ու զարգացումը ռադիոընկերությունների համար նպաստավոր պայմաններ ստեղծեցին հիմնելու և կազմակերպելու օնլայն ռեժիմով հեռարձակում ապահովող ծառայություններ: Դրանք հիմնականում վերջին 6-7 տարվա արդյունք են և արդեն հասցրել են հիմնավոր տեղ գրավել մեր երկրի ռադիոընկերությունում՝ ձեռք բերելով կայուն, ինտերակտիվ լսարան:

Առաջին առցանց ռադիոհեռարձակումների սկիզբը ՀՀ-ում դրվեց 2001թ. հոկտեմբերին, երբ «Ռադիո հայր» www.radiohay.am համացանցային հասցեով կազմակերպեց առաջին օնլայն հաղորդումները², որոնք որոշ ժամանակ անց

² Նույն տեղում, էջ 221:

տեխնիկական պատճառներով ընդհատվեցին՝ նորից եթեր հեռարձակվելով 2009 թվականից: Ժամանակակից փուլում ՀՀ-ում համացանցային օնլայն ռեժիսով են աշխատում նաև ՀՀ հանրային ռադիոն, «Վան», «Ռադիո հայ», «Վեմ», «Երևան» ռադիոկայանները, «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը: ՀՀ ռադիոընկերություններին հաջողվել է ոչ միայն իրականացնել օնլայն հեռարձակում, այլև օգտատերերին հնարավորություն տալ միանալու ռադիոյին, դիտել, կարդալ և մեկնաբանել կայքերում գեներված նյութերը, անհրաժեշտության դեպքում ներբեռնել տեղեկատվությունը և երաժշտական համարները: ՀՀ ռադիոկայաններից «Ռադիո Վանը» ունի նաև բլոգային հարթակ, որը բավական գործուն է և սիրված ռադիո-ունկնդիրների կողմից: Նմանատիպ մուլտիմեդիա ռադիոկայքերը՝ իրենց ֆոտո-աուդիո-տեսասարքերակներով բավական մեծ լսարան ունեն և կարողանում են անհապաղ արձագանքել իրադարձությանը և հասարակական կարծիք ձևավորել հեռարձակվող դեպքերի, փաստերի և իրադարձությունների վերաբերյալ: ՀՀ հանրային ռադիոն համացանցի մուլտիմեդիա հնարավորություններն օգտագործում է նաև ռադիոյի արտասահմանյան ունկնդիրների համար՝ այն ավելի ունկնդրելի և դիտելի դարձնելու նպատակով: ՀՀ հանրային ռադիոն ունի միջազգային համացանցային էջ՝ 8 լեզվով³:

ՀՀ ռադիոընկերությունները լուրջ ուշադրություն են դարձնում շարժական սարքերի համար հավելվածներ ստեղծելու գործին, որը հաջողությամբ իրականացնում է «Ազատություն» ռադիոկայանի հայաստանյան ծառայությունը: Ժամանակակից փուլում նմանատիպ ծառայությունները բավական տարածված են և մեծ ճանաչում ունեն: Ռադիոհեռուստատեսային հաղորդումների պատրաստման ասպարեզում շրջադարձային իրադարձություն էր 2004թ. ՄՄՆ-ում MTV հեռուստաընկերության վիջելի կողմից շրջանառության մեջ դրված «Պոդկաստինգը»⁴, որը համացանցի միջոցով տեսա- և աուդիոնյութերի սփռման նոր տեսակ է և միաժամանակ միավորում է համացանցի, հեռուստատեսության և ռադիոյի հնարավորությունները⁵:

³ **Հովսեփյան Մ.**, Ռադիոն և հեռուստատեսությունը Հայաստանի հանրապետությունում (ՀՀ ԳԱԱ «Հայաստան» հանրագիտարան, Ե., 2012, էջ 782):

⁴ **Насакин Р.** Тематический обзор: Интернет // PC Week. 2006, 24 янв.

⁵ **Պոդկաստինգը** կազմված է iPod (Apple ընկերության մեդիանվագարկիչների ապրանքային նշան) և broadcasting (եթեր) բառերից: Պոդկաստինգի միջոցով ռադիոկայքեր այցելողները հնարավորություն են ստանում լսել, դիտել և ներբեռնել իրենց հետաքրքրող տեղեկատվությունը և երաժշտությունը: Պոդկաստինգներ ՀՀ-ում ունեն ՀՀ հանրային ռադիոն, «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը, «Ռադիո Վան», «Երևան» և «Վեմ» ռադիոկայանները:

Հայաստանի ռադիոշուկայում իր ուրույն ներկայությունն է ապահովել Վիվասել-ՄՏՄ-ի կողմից հովանավորվող լիբանանյան «Սևան» ռադիոկայանը» (www.sevan.com), որը հեռարձակում է իրականացնում՝ ՀՀ-ում՝ «Արձագանք» ռադիոկայանի եթերացանցում 103.5 մեգահերց հաճախականությամբ, ինչպես նաև ռադիոհաղորդումներ է պատրաստում ԼՂՀ-ի համար՝ հեռարձակման շառավղում ընդգրկելով Ստեփանակերտը, Մարտակերտի և Հաղարթի շրջանները: «Սևանի» կայքը եռալեզու է և իր մուլտիմեդիա հնարավորություններով լավագույններից է հայկական ռադիոշուկայում:

ՀՀ-ում և Միջուրքում գործող ռադիոընկերություններից մի քանիսը, նոր լսարաններ նվաճելու մղումով, իրենց վեբ-կայքերը տեղադրում են նաև սոցիալական ցանցերում, հատկապես՝ Face-book-ում՝ օգտատերերի հետ անմիջական կապ ունենալու, ավելի մեծ լսարան ապահովելու և իրենց ռադիոազդեցության շառավիղը մեծացնելու համար: Այս առումով բավական գործունե են ՀՀ հանրային ռադիոյի, «Վեա» և «Ազատություն» (հայկական ծառայությունը) ռադիոկայանները, որոնք իրենց հեռարձակած հաղորդումներն ամբողջությամբ տեղադրել են Facebook-ում, ձևավորել ֆեյս-բուքյան խմբեր, որոնք ակտիվ կապի մեջ են ռադիոկայանների հետ: ՀՀ ռադիոշուկայում գործող մի շարք ռադիոկայաններ, օգտվելով Facebook-ի ընձեռած հնարավորություններից, կազմակերպում են առցանց ռադիոհաղորդումներ, հիմնականում հարցազրույցներ՝ Facebook-ի օգտատերերի ակտիվ մասնակցությամբ: Նմանատիպ աշխատանքների փորձ ունի «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը:

Հայկական ռադիոկայանները ներկայացված են նաև You Tube տեսահոսթինգում, որը նրանց հնարավորություն է տալիս օգտվելու տեղեկատվական այս նոր հարթակում առկա դրսևորման ձևերից ու միջոցներից:

Բացի վերը նշված ռադիոընկերությունների կայքերից, վերջին մեկ-երկու տարվա ընթացքում ՀՀ-ում սկսել են գործել նաև զուտ առցանց ռադիոկայաններ, որոնք դեռևս մեծ ճանաչում չունեն համացանցային ռադիոլսարանի կողմից: Դրանցից է Net FM (www.xNET.am) ռադիոկայանը, որը հիմնադրվել է 2010թ. ռոք և փոփ երաժշտության սիրահարների կողմից՝ ռոքի քարոզչության և տարածման նպատակով: Այն աշխատում է շուրջօրյա ռեժիմով և ունի իր փոքր, բայց կայուն լսարանը: Հաջորդը՝ «Ռադիոլոյս»-ը (www.radiovoice.am) ստեղծվել է 2013թ. ապրիլին և կայացման ճանապարհին է: Այժմ եթեր է դուրս գալիս օրական վեց ժամ և մտադիր է մինչև տարեվերջ այն հասցնել 24 ժամի: Նմանատիպ ռադիոկայանի օրինակ է ռուսական ru տիրույթում եթեր հեռարձակվող «Ռադիո Արմենիան» www.radio.armenia.ru-ն, որը ստեղծվել է 2009թ., սակայն կանոնավոր աշխատում է 2011-ից: Այն 24 ժամ շարունակ հեռարձակում է միայն հայկական ժամանակա-կից երաժշտություն: Ունի նաև նորությունների լրահոս, միալեզու է՝ ռուսերեն, ունկնդիրների թիվը սահմանապակ է: Առցանց ձևաչափ ուներ 2014թ.

Երևանում հիմնված «Լավ ռադիոն» (www.lavradio.am), որը վերաձևաչափվելով տեղափոխվեց 106.9 մեգա-հերց հաճախականություն՝ փոխարինելով «Արմռադիոյին»: Այս շարքում իր տեղն ունի նաև 2012 թ. ՀՀ կրթության միջազգային ակադեմիայի մշակութային խորհրդի հիմնադրած հայկական ուսանողական առաջին առցանց ռադիոկայանը՝ Ռադիո ՄԱՌ-ն (www.radiomao.am): Այն 24 ժամ հեռարձակում է երաժշտություն, հակիրճ տեղեկատվություն, ուսանողների միջև կազմակերպում է ինտերակտիվ շփում: Ռադիոկայանն ունի մուլտիմեդիա կայք՝ աուդիո-, ֆոտո-տեսաբաժիններով: Ունի իր բլոգը և ակտիվորեն ներկայացված է Facebook սոցիալական ցանցում: Չնայած առկա հնարավորություններին՝ սրա օգտատերերի թիվը այնքան էլ մեծ չէ, որը, սակայն, ապահովում է կայուն լսարան:

Այս ամենով հանդերձ, Հայաստանի Հանրապետությունում առցանց ռադիոկայանները թույլ են զարգացած, չունեն մեծ և կայուն լսարան: Պատճառներից մեկը թերևս մոբայլ կապի միջոցով FM ռադիոյի հասանելիությունն ու մատչելիությունն է, որը ռադիոունկնդրին հնարավորություն է տալիս բջջային հեռախոսի միջոցով առցանց տարբերակով ունկնդրել ՀՀ-ում և արտասահմանյան երկրներում հեռարձակվող ռադիոկայանները՝ օգտվելով նաև նրանց արխիվային, մոբայլ ռեսուրս ծառայություններից. դրանք առցանց հեռարձակում իրականացնող ռադիոկայաններին հնարավորություն են ընձեռում կատարելու երկարաժամկետ և կարճաժամկետ արխիվացում, որի շնորհիվ օգտատերերը իրենց հարմար ժամին կարող են ունկնդրել արխիվացված հաղորդումները: ՀՀ-ում մոբայլ կապի նմանատիպ ծառայություններից օգտվում են ՀՀ հանրային ռադիոն, «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությունը և «Վեմ» ռադիոկայանը:

Վերջին տարիներին բավականաչափ աշխուժացել են սփյուռքում գործող ռադիոկայաններն ու ռադիոժամերը, որոնք թվով քառասուներկուսն են: Նրանց որոշ մասն ունի ակտիվ կայքեր, որտեղ զետեղված են ռադիոկայանի պատրաստած սեփական տեղեկատվությունը, ինչպես նաև նորություններ՝ տարածաշրջանից և Մայր հայրենիքից: Դրանք եռալեզու են, ունեն մուլտիմեդիա հնարավորություն և տարբերակներ: Այդպիսի կայքեր ունեն Լիբանանի «Վանա ձայն» (www.radiovoiseofvan.com) և «Սևան» (www.sevan.com), Ուրուգվայի «Ռադիո Արմենիա» (www.radio-armenia.com), ԱՄՆ-ի Բոստոն քաղաքի «Հայկական անկախ ձայնասփյուռք» (www.hayreniq.com), Ֆրանսիայի մայրաքաղաքի «Այբ ՖՄ» (www.aybfm.com), Գանադայի Մոնրեալ քաղաքի «Նարեգ ՖՄ» (www.naregfm.com) ռադիոկայանները և այլն: Պետք է նշել, որ Ուրուգվայի բարձրաստիճան դեկավարության բնորոշմամբ՝ 1935 թվականից Մոնտեվիդեո մայրաքաղաքում գործող «Ռադիո Արմենիան» (նախկինում՝ «Ռադիո Կոմիտաս») իր հայերեն և իսպաներեն հեռարձակումներով ոչ միայն Ուրուգվայի Արևելյան Հանրապետության

լավագույն ռադիոկայաններից է, այլև լավագույններից է ողջ Լատինական Ամերիկայում:

ԱՄՆ-ում գործում է առցանց, շուրջօրյա «Երևաննայթս» (Լուս Անջելես) ռադիոկայանը (www.yerevannights.com), որը եթեր է հեռարձակում ժողովրդական, ազգագրական, ժամանակակից հայ էստրադային երաժշտություն և ունի բավական մեծ լսարան: Այն ունի ժամանակակից մուլտիմեդիա, երկլեզու կայք, որը բաղկացած է աուդիո-, տեսա-, ֆոտո-, օրվա լուրերի և հայկական երաժշտական պատվերների բաժիններից: Կայքի գովազդի բաժինը առցանց ռադիոկայանին հնարավորություն է տալիս վարելու գործուն ծրագրային քաղաքականություն: «Երևան-նայթս»-ը մշտապես հետևում է ՀՀ-ում տեղի ունեցող դեպքերին և իրադարձություններին՝ դրանց մասին տեղեկատվությունը տեղակայելով վեր-կայքում՝ լրահոսի տեսքով:

Բացի վերը թվարկածներից, հայկական ռադիոժամեր ունեն նաև լուրերի՝ համաշխարհային ծառայություն ներկայացնող երկու խոշորագույն ռադիոընկերություններ՝ «Ամերիկայի ձայնը» և «Ռադիո Վատիկանը», որոնք այլալեզու լրատվության շրջանակում թողարկում են ամենօրյա հայերեն ռադիոհաղորդումներ:

Ռադիոընկերությունների հայկական ծառայություններն աշխուժորեն համագործակցում են տեղի հայ համայնքների հետ՝ ներկայացնելով նրանց օրվա անցուդարձը, հիմնահարցերը, ինչպես նաև անդրադառնում են ՀՀ-ում տեղի ունեցող դեպքերին և իրադարձություններին: «Ամերիկայի ձայնը» համագործակցում է ՀՀ-ում գործող «Արմենիա» հեռուստաընկերության հետ՝ նրան տրամադրելով բազմաբնույթ և բազմաթեմատիկ տեսանյութեր:

РАДИО И ИНФОРМАЦИОННЫЕ ТЕХНОЛОГИИ

/ На примере радиостанций РА и армянской диаспоры /

ОВСЕПЯН М. М.

Резюме

Интенсивное развитие информационных технологий открыло новые перспективы для средств массовой информации Армении и армянской диаспоры. Развитие интернета дало возможность создать новые интернет-СМИ как в Армении, так и в зарубежных армянских общинах. Новые интернет-радиостанции, выйдя на международную арену, подготовили собственную конкурентоспособную радиопродукцию.

Радиостанции РА и армянской диаспоры в интернет-пространстве делятся на:

- ա/ радиостанции, имеющие собственные Веб-сайты
- б/ радиостанции, вещающие в онлайн режиме
- в/ интернет - радиостанции.

Кроме общественного радио РА в интернет-пространстве активно вещают ереванские «Радио Ван», «Радио Ай», «Радио Вем», «Лратвакан радио», армянское представительство «Радио Свободы», а также действующие на территории диаспоры радиостанции «Вана дзайн» (Бейрут), «Радио Севан» (Бейрут), «Радио Армения» (Монтевидео), «Айб ФМ» (Париж), «Бостонская независимая радиостанция» (Бостон) и другие.

На современном этапе в целях завоевания новых аудиторий армянские радиостанции свои Веб-сайты размещают на социальных сетях, особенно в Facebook-е, чтобы иметь прямой доступ к более широкой аудитории и увеличить радиус радиовлияния.

RADIO AND INFORMATION TECHNOLOGIES (BASED ON THE STUDY OF RA AND DIASPORA RADIOSTATIONS)

M. HOVSEPYAN

Abstract

The advance of information technologies has paved new avenues for the media in Armenia and the Diaspora. The rise of the Internet has created a new online media in Armenia and the Diaspora. Newly-created Internet radio stations extended the broadcasters an opportunity to enter the field of international radio broadcasting and prepare their own competitive radio production.

The Internet radiostations in the republic of Armenia and Diaspora comprise those that have their own websites, radiostations broadcasting in an online mode, and Internet radio stations.

Besides public radiostations, the Armenian cyberspace hosts Yerevan radiostations "Radio Van", "Radio Hay," " Radio Vem ", "Lratvakan radio," "Radio Liberty", as well as the radiostations in the Diaspora "Wana dzayn , "(Beirut) Radio Sevan "(Beirut)," Radio of Armenia "(Montevideo)," AYB FM "(Paris)," Boston independent radio"(Boston) and other stations.

At present, to reach larger groups of the Armenian audience, the radiostations host their websites on social networking sites, especially in Facebook.